

Հայտարարություն

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «Մաթեմատիկա» առարկայի (շաբաթական 10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ծև 1), մեկ լուսանկար 3×4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորումն անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում, միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),
- անձը հաստատող փաստաթուղթ (ծև 5),
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
 - ինքնակենսագրություն, (Ձև 5)
 - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
 - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
 - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,
 - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն սույն թվականի սեպտեմբերի 18-ից՝ մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ հոկտեմբերի 4-ին՝ ժամը 15:00-ին, Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N7 միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ ք. Գավառ, Գ. Միքայելյան 40:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (098)909-734, (094)141425 հեռախոսահամարով: